

իւրաքանչիւրոց՝ թաւշեայ, մետաքսեայ եւ կամ լոկ կտաւէ «քացավէյքա», որուն աստառը թանկագին մուշտակէ, աղուխու եւ կամ գառի մորթէ կ'ըլլար, զոր եւ ցայսօր հայ կանայք հաճութեամբ կը հագնին:

Կանանց գլուխը կը ծածկէր սպիտակ ֆէմը, որուն վրայ մետաքսեայ եւ կամ լոկ կտաւեայ վարչամակ մը այնպէս կը նետուէր՝ որ եռանկեան ձեւով կենայ եւ մէկ անկիւնն ետեւը մէջտեղ ըլլայ: Իսկ ոտնամանն էր տաճկական դեղին սաֆիանէ հողաթափ:

Այս օրերս Հայոցմէ շատերը նորագոյն եւրոպական ձեւով կը հագուին, սակայն կը գտնուին նաեւ այնպիսիք, մանաւանդ ի Սուլթափա, որ բազմաձալ՝ երկայն արեւելեան հագուստը կը պահեն:

Ի վերջոյ յիշենք, որ մինչդեռ Պուքովի նայի միացեալ Հայք լեհերէն կը խօսին եւ Վեհաց բարեկամ են, արեւելեան Հայք Ռուսմաններու բարեկամ են, եւ իրենց մայրենի լեզուին հետ՝ աւելի սիրով, մինչեւ իսկ ընտանեկան անձուկ շրջանին մէջ ռուսմաներէն կը խօսին, զոր շատ կատարեալ գիտեն:

